ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 11-ի № ՀՕ-112 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի «սպառողի համեմատությամբ.» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություն.

«հակամենաշնորհային կոմպլաենս (տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության պահանջներին համապատասխանության ներքին ապահովման համակարգ)՝ տնտեսվարող սուբյեկտի կամ տվյալ տնտեսվարող սուբյեկտի հետ միասին մեկ խմբի մեջ մտնող անձանց ներքին ակտով, եթե տվյալ ներքին ակտը տարածվում է այդ տնտեսվարող սուբյեկտի վրա, նախատեսված կազմակերպչական և իրավական միջոցառումների ամբողջություն, որոնք ուղղված են տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության պահանջների պահպանմանը և խախտումների կանխարգելմանը.»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5^2 գլխով.

«ԳԼՈՒԽ 5^2
ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿՈՄՊԼԱԵՆՍ

Հոդված 16^4. Հակամենաշնորհային կոմպլաենս

1. Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության պահպանման և խախտումների կանխարգելման նպատակով տնտեսվարող սուբյեկտը կազմակերպում է հակամենաշնորհային կոմպլաենս:

Հակամենաշնորհային կոմպլաենսի կազմակերպման համար տնտեսվարող սուբյեկտը կամ տնտեսվարող սուբյեկտի հետ միասին մեկ խմբի մեջ մտնող անձանց կողմից ընդունվող ներքին ակտը պետք է պարունակի.

1) տնտեսվարող սուբյեկտի գործունեության իրականացման հետ կապված տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման ռիսկերի գնահատման իրականացման կարգի պահանջներ,

2) տնտեսվարող սուբյեկտի կողմից իր գործունեության իրականացման հետ կապված տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումներ,

3) տնտեսվարող սուբյեկտի կողմից հակամենաշնորհային կոմպլաենսի կիրարկման նկատմամբ հսկողության իրականացմանն ուղղված միջոցառումներ,

4) հակամենաշնորհային կոմպլաենսի կիրարկման համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվություն:

Տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի տվյալ ներքին ակտում ներառել լրացուցիչ պահանջներ հակամենաշնորհային կոմպլաենսի կազմակերպման համար:

2. Տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի մշակված ներքին ակտը ուղարկել Հանձնաժողովին կարծիքի: Հանձնաժողովը մշակված ներքին ակտի վերաբերյալ կարծիքը տնտեսվարող սուբյեկտին տրամադրում է առավելագույնը 1 (մեկ) ամսվա ընթացքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ակտի ընդունման մասին տեղեկատվությունը տեղադրվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով և սույն օրենքով կարգավորող լիազորություններով օժտված իրավասու պետական մարմինների պաշտոնական կայքէջերում: Նշված տեղեկատվությունը տեղադրվում է հայերենով:

4. Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման գործով սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորող լիազորություններով օժտված իրավասու պետական մարմինների կողմից վարչական վարույթ հարուցելու և ուսումնասիրություն իրականացնելու դեպքում կազմակերպության տնտեսական մրցակցության պաշտպանության մասին

օրենսդրության պահանջներին համապատասխանության ապացուցման պարտավորությունը կրում է տնտեսվարող սուբյեկտը:

5. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում գործունեություն իրականացնող, թափոնների գործածության, աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտներում գործունեություն իրականացնող մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները, գործարար սուբյեկտները, որոնց կանոնադրական կապիտալում պետությունն ունի 50 տոկոսից ավել բաժնեմաս, պարտավոր են սույն օրենքի 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխան մշակել և ընդունել հակամենաշնորհային կոմպլաենսի ինստիտուտը:

6. կազմակերպությունները պարտավոր են սույն օրենքի 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխան մշակել և ընդունել հակամենաշնորհային կոմպլաենսի ինստիտուտը:

7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձինք պարտավոր են կազմավորվելու օրվան հաջորդող 6 ամսվա ընթացքում սույն օրենքի 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխան մշակել և ընդունել ներքին ակտեր հակամենաշնորհային կոմպլաենսի կազմակերպման համար:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել 41^{1} հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

1.Սույն օրենքի 16^{4}-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց համար հակամենաշնորհային կոմպլաենսի ինստիտուտի ընդունման վերջնաժամկետը սահմանվում է 2023 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

2. Սույն օրենքի 16^{4}-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձինք պարտավոր են ընդունել հակամենաշնորհային կոմպլաենսի ինստիտուտը կազմավորվելու օրվան հաջորդող 6 ամսվա ընթացքում:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 33-րդ հոդվածը լրացնել 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) 171.1, 171.2, 171.3, 171.4, և 171.5 հոդվածներով նախատեսված իրավախախտումները կատարելուց առաջ հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրումը և կիրարկումը, այդ թվում տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտումների դադարեցումը:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել 171.12-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 171.12. Հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրմանն ուղղված ներքին ակտերի ընդունման պահանջի չկատարումը

Հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրմանն ուղղված ներքին ակտերի ընդունման պահանջի չկատարումը, եթե այդ ակտերի ընդունման պարտադիր պահանջը նախատեսված է տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությամբ, առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի չափով:

Սույն հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված մեղմացուցիչ հանգամանքները:»:

Հոդված 3. Օրենսգրքի 244[8] հոդվածի առաջին պարբերությունը փոփոխել հետևյալ բովանդակությամբ. «Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմինը քննում է սույն օրենսգրքի 171.1-171.12-րդ հոդվածներով նախատեսված գործերը»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախագծով առաջարկվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը լրացնել նոր գլխով՝ գլուխ 5[1], որով սահմանվում է տնտեսվարող սուբյեկտի համար հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրման հնարավորությունը:

Բանն այն է, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է հանրային շահերի պաշտպանության նպատակով մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը օրենքով սահմանելու հնարավորությունը: 2000 թվականի նոյեմբերի 6-ի «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Նշված օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր,

նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Մինչդեռ, ներկայիս միջազգային պրակտիկայում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունը մշտապես զարգանում և բարդանում է: Հակամենաշնորհային օրենսդրության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում սահմանվում են խիստ պատժամիջոցներ, որոնց կիրառումը մեծ վնաս կարող է հասցնել կազմակերպությունների գործարար համբավին:

Կոմպլաենսի՝ որպես տնտեսական մրցակցության պաշտպանության գործիքի ներդրումը մեր իրավական համակարգում հնարավոր է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի լիազորության օրենսդրական ամրագրմամբ՝ սահմանելու տնտեսական մրցակցության պաշտպանության պահանջների պահպանման արտաքին կանոններ, որոնք տնտեսվարողի համար իբրև հիմք կծառայեն արդեն ներքին միջոցառումներ սահմանելու համար՝ ուղղված հակամենաշնորհային քաղաքականության պահանջների պահպանման ընթացիկ վերահսկողությանը:

Ստացվում է, որ կոմպլաենսը ծառայում է որպես պետություն-տնտեսվարող սուբյեկտ հարաբերություններում երկուստեք ընդունելի գործիք այն առումով, որ տնտեսվարողի գործունեությունն այդպիսով համապատասխանում է իրավասու մարմնի սահմանած չափանիշներին, մյուս կողմից՝ տնտեսվարողի համար առավել որոշակի և կանխատեսելի է դառնում պետության քաղաքականությունը տնտեսական մրցակցության ապահովման ոլորտում: Սա երաշխիքային նշանակություն կունենա նաև խախտումների հայտնաբերման դեպքում տնտեսվարող սուբյեկտի մեղքի հավաստման, իրավախախտման պատճառների վերհանման և արդյունքում պատասխանատվության համաչափության ապահովման տեսանկյունից:

Այդ առումով հակամենաշնորհային կոմպլաենսի ամրագրումը ՀՀ օրենսդրությամբ կհանգեցնի.

1.կազմակերպության կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների և տուգանքների կիրառման նվազեցմանը,

2.հակամենաշնորհային ռիսկերի, կոռուպցիոն հանցագործությունների նվազեցման միջոցով ձեռնարկատերերի և կազմակերպությունների ղեկավարների անձնական անվտանգության բարձրացմանը,

3.իրավախախտումների ռիսկեր պարունակող աշխատակիցների կողմից իրականացվող գաղտնի գործողությունների բացահայտմանը, ինչն էլ կնվազեցնի կազմակերպության և ղեկավարության պատասխանատվության ենթարկվելու ռիսկերը,

4.անբարեխիղճ կոնտրագենտների և մրցակիցների բացահայտմանը, ինչը կազմակերպությանը հնարավորություն կտա գումար խնայելու,

5.կազմակերպության հեղինակության պահպանմանը և բարձրացմանը:

Հակամենաշնորհային քաղաքականությունը և ազատ տնտեսական մրցակցության պաշտպանությունը պետական կարգավորման կարևորագույն խնդիրներից են:

Արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը կարևորվում է երկրում գործարար միջավայրի բարելավման և զարգացման, ինչպես նաև տնտեսության մեջ բարձր մրցակցային ակտիվության պահպանման համար:

Հակամենաշնորհային քաղաքականությունը նպատակ է հետապնդում պաշտպանել բարեխիղճ մրցակցությունը և ապահովել շուկայական հարաբերությունների արդյունավետությունը:

Մենաշնորհների նկատմամբ պետության ազդեցությունը դրսևորվում է մրցակցության պետական կարգավորմամբ: Իսկ վերջինիս հիմնական ուղղություններից մեկը տնտեսության հակամենաշնորհային կարգավորումն (կոմպլաենս) է:

Պետության հակամենաշնորհային կարգավորումը տնտեսության պետական քաղաքականության ուղղություններից է և ներկայացնում է միջոցառումների համակարգ (օրենսդրություն, հարկային քաղաքականություն և այլն), որն ապահովում է արտադրության և շուկաների մենաշնորհացման սահմանափակումը՝ մրցակցության ակտիվացման նպատակով:

Հակամենաշնորհային կոմպլաենսը հակամենաշնորհային օրենսդրության պահպանմանն ուղղված կորպորատիվ ծրագիր կամ քաղաքականություն է, որը բաղկացած է հետևյալ տարրերից.

1.կազմակերպության հանրային կամ ոչ հանրային քաղաքականությունը տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ,

2.կազմակերպության վաճառքի և բաշխման քաղաքականությունը, որը նախատեսում է պայմանագիր կնքելու համար կոնտրագենտների ընտրության նկատմամբ խտրականության բացառում,

3.աշխատակիցների հետ համապատասխան դասընթացների անցկացում,

4.կազմակերպություններում հակամենաշնորհային կոմպլաենսի չպահպանման նկատմամբ աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու ծրագրերի ներդրում,

5.կազմակերպությունների ներսում մոնիթորինգի և աուդիտի իրականացում և այլն:

Հարկ է նաև նկատել, որ Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է նաև հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրման միջազգային փորձը: 2017 թվականի հունվարի 1-ին Ղազախստանի «Մրցակցության և բնակարանաշինության պետական աջակցության օրենսդրական ակտերում փոփոխություններ մտցնելու մասին» օրենքով սահմանվեց հակամենաշնորհային կոմպլաենսի հասկացությունը: Նշյալ օրենքով փոփոխություններ իրականացվեցին Ղազախստանի «Ձեռնարկատիրական օրենսգրքում», մասնավորապես նշյալ օրենսգրքի 195-1 հոդվածով տրվեց հակամենաշնորհային կոմպլաենսի հասկացությունը, որով այն սահմանվեց որպես Ղազախստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության ոլորտում օրենսդրության խախտումների կանխարգելման միջոցառումների համակարգ[1]:

Նշյալ հոդվածով սահմանվեց նաև, որ հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրման համար շուկայի սուբյեկտներն իրավասու են ընդունել հակամենաշնորհային կոմպլաենսի ակտեր.

[1] https://online.zakon.kz/Document/?doc_id=38924913#pos=2;-256

1) համապատասխան ապրանքների շուկայում սուբյեկտների բարեխիղճ մրցակցության քաղաքականությունն ու կանոնները նախատեսող արտաքին ակտ

2) Ղազախստանի Հանրապետությունում մրցակցության պաշտպանության ոլորտում իրավախախտումների ռիսկերի կառավարմանն ուղղված մեթոդները, ռիսկերի գնահատման միջոցները, շուկայի սուբյեկտների աշխատանքների կազմակերպման կարգը նախատեսող ներքին ակտ

3) շուկայի սուբյեկտներն իրավունք ունեն հակամենաշնորհային մարմին ուղարկել հակամենաշնորհային կոմպլաենսի արտաքին ակտը հակամենաշնորհային կոմպլաենսի տիպային ձևին համապատասխանեցնելու համար, որը պետք է ուսումնասիրվի այն ներկայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում

4) հակամենաշնորհային մարմնի կողմից ուսումնասիրված հակամենաշնորհային կոմպլաենսի արտաքին ակտի նախագիծը հակամենաշնորհային կոմպլաենսի ներքին ակտին համապատասխանելու պարագայում հանդիսանում է կոնկրետ շուկայի սուբյեկտի կամ կոնկրետ իրավիճակի նկատմամբ մրցակցության պաշտպանության Ղազախստանի Հանրապետության օրենսդրության պարզաբանման ակտ:

Ղազախստանում հակամենաշնորհային կոմպլեանսի տիպային ակտերը հաստատվեցին ազգային տնտեսության նախարարի հրամանով :

Ռուսաստանում հակամենաշնորհային օրենսդրության զարգացումը և դրա կիրառման պրակտիկան վերջին տարիներին նշանավորվել է հակամրցակցային վարքի համար տուգանքների և քրեական պատասխանատվության ներդրմամբ, ինչպես նաև հակամենաշնորհային վեճերի ավելացմամբ:

Ռուսաստանի Դաշնության նախագահի 2019 թվականի մարտի 1-ի մրցակցության զարգացման պետական քաղաքականության մասին հրամանագրով սահմանվեց իշխանության ֆեդերալ և տարածաշրջանային մարմինների գործունեության մեջ հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրման պահանջ:

Ներկայումս Ռուսաստանի Դաշնությունում հակամրցակցային կարգավորման բնագավառը հասել է այն մակարդակին, որ կազմակերպություններն իրենք են մասնակցում մրցակցության զարգացման և իրավախախտումների կանխարգելման գործընթացին:

ԱՄՆ-ի հակամենաշնորհային հիմնական օրենքը՝ Շերմանի ակտը, հակամենաշնորհային կոմպլաենսի մասին նորմեր չի պարունակում: Սակայն դատարանները քրեական պատասխանատվություն նշանակելիս, այդ թվում մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման համար, օգտվում են ԱՄՆ-ի՝ վճիռների կայացման ձեռնարկից[2]: Այն իրենից ներկայացնում է խորհրդատվական բնույթի փաստաթուղթ, որով սահմանված է, որ հակամենաշնորհային գործերը քննելիս դատարանները պետք է հաշվի առնեն կազմակերպության կողմից արդյունավետ և հաջողակ ձևով ներդրված հակամենաշնորհային կոմպլաենսի առկայության հանգամանքը: Այսպես, կազմակերպության կողմից հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրումը համարվում է հաջողված, եթե այն.

1) ցուցաբերում է բավարար հետևողականություն հանցավոր գործողությունների կանխման և բացահայտման համար,

2) միջոցներ է ձեռնարկում օրենսդրության պահպանման և պատշաճ գործելակերպի համար, այդ թվում.

- ներմուծում է հանցավոր գործելակերպի կանխարգելման և բացահայտման ստանդարտներ և միջոցառումներ,
- ապահովում է միջին օղակի ղեկավարության տեղեկացվածությունը էթիկայի ծրագրի և կոմպլաենսի բովանդակությանը և դրա արդյունավետ իրականացման նկատմամբ վերահսկողությունը,
- ունի ղեկավարության վերևի օղակի աջակցությանը և նրա կազմից նշանակում է նշված ծրագրի պատասխանատուին,
- նշանակում է ծրագրի ամենօրյա իրականացման պատասխանատուներին, որոնք ենթակա են բարձրագույն ղեկավարությանը և ունեն համապատասխան լիազորություններ և ռեսուրսներ,

[2] http://www.ussc.gov/guidelines-manual/2011/2011-8b21

3) ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները և դրսևորում է պատշաճ հետևողականություն իրավախախտումների հետ առնչություն ունեցող անձանց մասնակցությունը կազմակերպության կառավարման մարմիններին կանխելու համար,

4) խելամիտ ջանքեր է գործադրում ծրագրի վերաբերյալ դասընթացների միջոցով կազմակերպության անձնակազմին ծանոթացնելու ուղղությամբ,

5) ներդնում է ծրագրի իրականացման մոնիթորինգի ընթացակարգը, այդ թվում աուդիտի, ծրագրի արդյունավետության պարբերաբար գնահատման, գաղտնիության սկզբունքի պահպանմամբ ներքին տեղեկատվություն ստանալու համակարգի ներդրումը,

6) հետևողականորեն ամրապնդում է էթիկայի և կոմպլաենսի ծրագիրը՝ երաշխավորելով դրանց պահանջների իրականացումը և պատասխանատվության միջոցներ է կիրառում այն անձանց նկատմամբ, ովքեր անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել հանցավոր վարքագիծը կանխելու և հայտնաբերելու ուղղությամբ,

7) իրավախախտման առկայության դեպքում ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ պատշաճ արձագանքման և նմանատիպ դեպքերը կանխելու ուղղությամբ:

Եվրոպական միությունում մրցակցային հարաբերությունները կարգավորվում են Եվրոպական միության պայմանագրով, որը կոմպլաենսի մասին նորմեր չի պարունակում: Սակայն անդամ պետությունների հակամրցակցային մարմիններն ընդունել են խորհրդատվական բնույթի փաստաթղթեր, որտեղ սահմանվում են կոմպլաենսի ծրագրի հիմնական հատկանիշները:

Եվրոպական հանձնաժողովը 2011 թվականին հրապարակեց տեղեկատվական թերթիկ «Կոմպլաենսի հարցեր» վերնագրով[3], որտեղ մանրամասն բացատրվում է, թե որն է հանդիսանում հակամրցակցային օրենսդրության պահպանման կազմակերպության պարտավորությունը, որոնք են մրցակցային շուկայի հիմնական կանոնները, ինչ ռիսկեր է կրում իրավախախտ կազմակերպությունը և ինչպես կառուցել կոմպլաենս-վերահսկողության արդյունավետ ռազմավարություն:

[3] http://ec.europa.eu/competition/antitrust/compliance/index_en.html

Մեծ Բրիտանիայում 2011 թվականին հրապարակվեց «Ինչպես ձեր բիզնեսին համապատասխանել հակամրցակցային իրավունքի նորմերին» ձեռնարկը[4], որով կազմակերպություններին առաջարկվեց կիրառել ռիսկերի գնահատման հետ կապված արդյունավետ կոմպլաենսի ծրագիր:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ շատ երկրներում կոմպլաենսի մեխանիզմի ներդրումը նախնական փուլում կրում է կամավոր բնույթ:

ԱՄՆ-ում դատարանները վճիռ կայացնելիս որպես մեղմացուցիչ հանգամանք տուգանքի չափը նվազեցնում են՝ հաշվի առնելով կազմակերպությունում կոմպլաենսի ծրագրի ներդրումը: Սակայն այն չի վերաբերում խոշոր հակամենաշնորհային խախտումներին, օրինակ, կարտելային փոխհամաձայնություններին[5]:

Նույն դիրքորոշումն առկա է Եվրոպական միությունում:

Եվրոպական Միության անդամ մի շարք երկրներում ազգային մակարդակով ուսումնասիրվում են պատժաչափերի իջեցման հնարավորությունը կազմակերպությունների կողմից հակամենաշնորհային կոմպլաենսի առկայության և նրա պահանջների պահպանման դեպքում: Այսպես, Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում նմանատիպ դեպքերում նախատեսվում է տուգանքի իջեցում 10%, իսկ Իտալիայում 15%-ով:

2. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից:

3. Ակնկալվող արդյունքը

[4] https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/284402/oft1341.pdf
[5] http://www.justice.gov/atr/public/speeches/308499.pdf

Հակամենաշնորհային կոմպլաենսի օրենսդրորեն ամրագրումը կապահովագրի բիզնեսին տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումներից և հնարավորություն կտա խուսափել տուգանքներից, մյուս կողմից՝ պետության կողմից կապահովվի երկրում գործարար միջավայրի բարելավման և զարգացմանն ուղղված հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը: